

ՌՈՒՄԱՆԻ ՀԱՅՈՑ ՄԻՈՒԹՅԱՆ ԵՐԿԼԵԶՎՅԱՆ ԱՄՍԱԳԻՐ

ՆՈՐ ԿՅԱՆԿ

ՏԱՐԻ 75 ԹԻՎ, 09 - 10 (2122 - 2123) ՍԵՊՏԵՄԲԵՐ - ՀՈԿՏԵՄԲԵՐ 2024

NOR GHIANK



ՍԵՐԳԵՅ ՓԱՐԱԶԱՆՈՎ - 100

Կլուժ

«ԱՌԱՍՊԵԼ ԵՎ ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆ.
ԱՆԻ ՔԱՂԱՔԻ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ
ՏՐԱՆՍԻԼՎԱՆԱՀԱՅՈՒԹՅՈՒՆԸ» ԽՈՐԱԳՐՈՎ
ՍԻԶԱԶԳԱՅԻՆ ՍԻՄՊՈԶԻՈՒՄ



03/10/2024

MCC Regional Center,
Kolozsvár/Cluj-Napoca,

Huszár/Călărășilor street 1 (Hotel Belvedere)

Myth and Identity

**The Memory of Ani and
the Ani-Armenians
in Transylvania**

Հոկտեմբերի 3-ին Կլուժի «Մատիաս Կորվինուս» քոլեջում կազմակերպվել է միջազգային սիմպոզիում «Առասպել և ինքնություն. Անի քաղաքի հիշողությունը և տրանսիլվանահայությունը» խորագրով:


Միջնադարյան Հայաստանի մայրաքաղաք Անին երկար դարեր ի վեր գտնվում է ավերակ վիճակում: Այն եղել է զարգացած քաղաքակրթության կենտրոն, որը դարեր շարունակ խորհրդանշել է հայկական պետականությունը: Կորուսյալ Անին իրական մայր քաղաքից վերածվել է բազմաթիվ հայե-

րի երևակայության մեջ ապրող քաղաքի՝ սերնդեսերունդ փոխանցվող հարատև մշակութային սրբապատկերի:

Տրանսիլվանիայի հայերը, որոնք ձուլվել են հունգար ազգաբնակչության մեջ, մինչև 19-րդ դարը Անին համարել են որպես իրենց բնօրրան: Ինքնության այդ պատկերացումը խորհրդանշում էր պատկանելիություն հայ ազնվականությանը և վերնախավին մի ժամանակաշրջանում, երբ տրանսիլվանահայերին ոչ լեզուն, ոչ էլ կրոնը այլևս չէին կապում մայր հայրենիքում ապրող իրենց հայրենակիցների հետ:

Անին դարձել էր հիշողության կարևոր վայր խորապես արմատավորված տրանսիլվանահայերի ինքնության մեջ:

Դասախոսությունները կենտրոնացան Անիի տարբեր պատկերացումների վրա և քննարկեցին տրանսիլվանահայության ինքնության վրա այդ կորուսյալ քաղաքի ժառանգության ունեցած ազդեցությունը: Ինչ դաս կարող ենք քաղել Տրանսիլվանիայի հայերի օրինակից: Ինչպե՞ս կարելի է պահպանել ինքնություն առանց մայր հայրենիքի աջակցության: Ինչպե՞ս է հաջողվել այս համայնքին պահպանել իր ազ-



գային դիմագիծը լեզվականորեն և մշակութապես օտար միջավայրում և միաժամանակ դառնալ հասարակության ստեղծագործ և ազդեցիկ բաղադրամաս: Այս հարցերին փորձեցին պատասխանել հրավիրված փորձագետները:

Միմպոզիուժն ընդգրկեց երկու բաժին:

Բաժին առաջին. «Անի. Կորուսյալ քաղաքը հայերի հավաքական պատկերացման մեջ և դրանից այն կողմ»:

Դասախոսները քննարկեցին Անիի վերածումը պատմական

շոշափելի քաղաքից հայ ինքնության ու հիշողության հզոր խորհրդանիշի, որն արտացոլում է հայրենիքի, պետականության և մշակութային հիշողության միջև առկա բազմաթեղ փոխկապակցվածությունը: Բանախոսները քննարկեցին այն, թե ինչպես են ժամանակի ընթացքում վերաբերվել Անիին՝ որպես առևտրի և դիվանագիտության կենտրոնի, ժամանակակից Թուրքիայում գտնվող վիճահարույց վայրի կամ էլ մշակութային ուխտագնացության և խորհրդածության վայրի: Առաջին բաժնի դասախոսներն էին Լուս Անջելեսի կալիֆոռնիական համալսարանի հայկական ուսումնասիրությունների պրոֆեսոր դոկտոր Փիտր Քովը (Peter Cowe) «Ազգի և առևտրի հանդիպումը՝ Անի քաղաքի բազմազան աշխարհում» դասախոսությամբ; Բեռլինի Ազատ համալսարանի պատմության և իսլամագիտության պրոֆեսոր դոկտոր Էլկե Հարտմանը (Elke Hartmann) «Կորուստ և յուրացում. Կարսը և Անին այսօրվա Թուրքիայում» դասախոսությամբ; Բուդապեշտի Պազմանի Պետերի անվան կաթոլիկ համալսարանի մարդաբան, դոկտոր Կոնրադ Սյեկյերսկին (Konrad Siekierski) «Անին, որպես հայոց ուխտագնացության վայր» դասախոսությամբ:

Բաժին երկրորդ. «Անի քաղաքի հիշողությունը հայկական մշակույթի մեջ և սփյուռքում»:

Դասախոսությունները արժարձեցին Անիի շարունակական նշանակությունը, որպես հավաքական հիշողության մեջ հայոց պատմության ոսկե դար համարվող ժամանակաշրջանի մշակութային ժառանգու-

թյան, ինքնության և կարոտախտային հիշողությունների վայր: Դասախոսները քննարկեցին կորուսյալ քաղաքի ժառանգության ազդեցությունը տրանսիլվանահայերի ժառանգության և ինքնության վրա. Բուդապեշտի Պազմանի Պետերի անվան կաթոլիկ համալսարանի Հայկական ուսումնասիրությունների ամբիոնի համակարգող դոկտոր Բալինտ Կովաչը (Bálint Kovács) «Անեցի հայերը Տրանսիլվանիայում» դասախոսությամբ; Լայպցիգի GWZO ինստիտուտի գիտաշխատող Կարեն Ջալլաթյանը՝ «Կորուսյալ քաղաք Անիի լուսանկարչական հուշերը» դասախոսությամբ; Բեռլինի «Հուշամատյան» հետազոտական ծրագրի ղեկավար դոկտոր Վահե Թաշճյանը և Բեյրութի Ճարտարապետական Բարձրագույն դպրոցի դասատու ճարտարապետ Յոզեֆ Ռուստոմը (Joseph



Rustom)՝ «Անիի մայր տաճարը և հայկական սփյուռքի նոր եկեղեցիները Լիբանանում»: Միջոցառումը վարեց «Մատիաս Կորվինուս» քոլեջի դասախոս պատմաբան Աթիլա Հունյադին (Attila Hunyadi): Միպոզիումի լեզուն անգլերենն էր: Ե վ կազմակերպիչները, և՛ դասախոսները ցանկություն հայտնեցին հաջորդ տարի էլ

շարունակել հայոց պատմության և մշակութային ժառանգության հիմնախնդիրներն ուսումնասիրող սույն միջոցառումը:

Պատւ ԱՆԿԱ

Լուսանկարները՝ Պատւ Անկայի և MCC-Ardeal ֆեյսբուքյան էջից

